ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ 3-րդ գլխի փոփոխությունը պայմանավորված է համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ:

Այգու կառավարումն ավելի արդյունավետ, նպատակային և թափանցիկ իրականացնելու նպատակով ստեղծված կոլեգիալ կառավարման մարմնում՝ Կառավարման Խորհրդում կատարել հստակ կարգավորումներ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Բաղկացած է 11 էջից, կազմված է

«---» ----------2020 թ.

Օրինակ---------

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» ----------2020 թ.

N_____Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

…… Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ

Գրանցման ամսաթիվը՝ 23.10.2009 թ.

Գրանցման թիվ՝ 282.210.06577

Վկայական՝ 03Ա-086322

ՀՎՀՀ՝ 00804091

23.10.2009 թ.-ին հաստատված

կանոնադրության

Թիվ ---- փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալությունում

« » 2020 թ.

……

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2020

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Կանոնադրության 3-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Երևանի քաղաքապետը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ Կազմակերպության Կառավարման խորհուրդը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ Կազմակերպության տնօրենը:

Երևանի քաղաքապետը, Կազմակերպության Կառավարման խորհուրդը, Կազմակերպության տնօրենը և նրա տեղակալնելը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ բացառապես ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են.

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

ե) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ը) Օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

3.4. Երևանի քաղաքապետն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

3.5. Երևանի քաղաքապետը.

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է Կազմակերպության Կառավարման խորհուրդը և նշանակում է Կազմակերպության տնօրենին, վաղաժամկետ դադարեցնում է Կազմակերպության Կառավարման խորհրդի անդամների, Կազմակերպության տնօրենի լիազորությունները, սահմանում է Կազմակերպության տնօրենի աշխատավարձի չափը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի կամ Կազմակերպության Կառավարման խորհրդի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

է) Կազմակերպության Կառավարման խորհրդի առաջարկի հիման վրա սահմանում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

ը) իրականացնում է ՀՀ օրենքով, Հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

3.6. Կազմակերպության Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված անդամների քանակը սահմանվում է սույն կանոնադրությամբ հետևյալ կազմով՝ նրա անդամների ընտրության հետևյալ չափանիշների հայեցակարգային մոտեցումներով.

3.6.1. Կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի ընդհանուր ժողովի կողմից առաջադրված՝ կոլեկտիվի կազմից թեկնածուներ, ովքեր պետք է կազմեն Կառավարման խորհրդի 20%, որոնցից.

ա) առնվազն մեկը պետք է ունենա Կազմակերպությունում անմիջականորեն կենդանիների հետ աշխատելու առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, աչքի ընկնի իր մասնագիտական բարձր կարողություններով և բարեխիղճ աշխատանքով,

բ) մյուսները պետք է ունենան մասնագիտական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ, տիրապետեն կենդանաբանական այգիների առջև դրված խնդիրներին և դրանց լուծման ուղիներին, ծանոթ լինեն Կազմակերպության ռազմավարական փաստաթղթերի և ՀՈԱԿ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի բովանդակությանը, ունենան առանցքային դերակատարում Կազմակերպության ամենօրյա գործունեության մեջ:

3.6.2. Երևանի քաղաքապետի կողմից առաջադրված 1 թեկնածու, ով չի կարող լինել համայնքային պաշտոն զբաղեցնող անձ, Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կամ Երևանին ենթակա կազմակերպությունների աշխատակից, և ով պետք է ծանոթ լինի կենդանաբանական այգիների ռազմավարական փաստաթղթերի և ՀՈԱԿ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի բովանդակությանը:

3.6.3. Երևանի ավագանու խմբակցությունների կողմից առաջադրված մեկական ավագանու անդամ թեկնածու, ով ծանոթ լինի ՀՈԱԿ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի բովանդակությանը, ունենա նպաստավոր դերակատարում Կազմակերպության գործունեության մեջ:

3.6.4. Մասնագիտացված գիտական և կրթական կազմակերպությունների՝ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից առաջադրված մեկական թեկնածու (ընդհանուրը՝ 4), ովքեր կհամապատասխանեն հետևյալ չափանիշներին.

ա) ունենան գիտական կամ ուսումնական հաստատությունում կենդանաբանության, անասնաբուժության, անասնաբուծության ոլորտներում առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ,

բ) ունենան կենդանաբանության, անասնաբուժության, անասնաբուծության ոլորտներում կատարված գիտական ուսումնասիրություններ (գիտական հոդվածներ, մոնոգրաֆիաներ, ձեռնարկներ, դասագրքեր, երաշխավորություններ և այլն),

գ) ունենան գիտական աստիճան (կենսաբանական գիտությունների դոկտոր կամ թեկնածու՝ կենդանաբանության, գյուղատնտեսության (անասնաբուժություն, անանսապահություն, մակաբուծաբանություն) մասնագիտությունների գծով),

դ) ունենան վայրի կենդանիների խնամքի, բազմացման, պահպանության և բնության մեջ վերարտադրության փորձ (ցանկալի պահանջ է),

ե) ունենան գիտական կամ ուսումնական հաստատությունում աշխատանքին զուգընթաց կառավարչական հմտություններ կամ ադմինիստրատիվ փորձ (ցանկալի պահանջ է):

3.6.5. Մասնագիտացված միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների կողմից առաջադրված առնվազն մեկ թեկնածու (յուրաքանչյուրից ոչ ավել, քան մեկ թեկնածու), ով պետք է.

ա) ունենա առնվազն բարձրագույն մասնագիտական՝ կենդանիներին առնչվող կրթություն,

բ) ունենա վայրի կենդանիների խնամքի, նրանց հաջողությամբ բազմացման առնվազն 5-ամյա փորձ,

գ) ունենա կենդանաբանական այգիներում կամ կենդանիների բուծման կենտրոններում աշխատանքի առնվազն 5-ամյա փորձ:

3.6.6. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից առաջադրված մեկական թեկնածու (ընդհանուրը՝ 2), որոնց չափանիշները սահմանվում են տվյալ մարմինների ներքին կանոնանդրական պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով մի շարք մոտեցումներ, մասնավորապես.

- ✓ Կազմակերպության հետ անմիջական կապն՝ ըստ զբաղեցրած պաշտոնի,
- ✓ կենդանական աշխարհի պահպանության հարցերով զբաղվելու հանգամանքը,
- ✓ ռազմավարական փաստաթղթեր մշակելու կարողությունը,
- ✓ կառավարչական գործընթացներին տիրապետելը:

3.7. Կազմակերպության Կառավարման խորհրդի անդամների կազմը ձևավորվում է ըստ սույն կանոնադրության 3.6 կետի՝ Երևանի քաղաքապետի հաստատմամբ: Ցանկացած ժամանակ Կառավարման խորհրդի անդամին առաջադրած մարմինը կամ կազմակերպությունը կարող է փոխել իր անդամին՝ 15 օր առաջ փոփոխության նպատակով դիմելով Երևանի քաղաքապետին:

Կառավարման խորհրդի առնվազն ինը անդամների դիմում-պահանջով Երևանի քաղաքապետը դիմում է Կառավարման խորհրդի անդամին առաջադրած մարմնին կամ կազմակերպությանը պահանջով՝ փոխել իր ներկայացուցիչ անդամին, եթե վերջինիս գործունեությունը հիմնավորվել է անարդյունավետ կամ փաստացի դադարել է ներկայացնել երաշխավորող մարմնին:

3.8. Կազմակերպության Կառավարման խորհրդի գործունեության ժամկետը 5 տարի է:

3.9. Կազմակերպության Կառավարման խորհրդի գործունեությունը կարող է դադարել Հիմնադրի որոշմամբ:

Երևանի քաղաքապետը Հիմնադրին ներկայացնելով իր հիմնավորումները՝ կարող է առաջարկել դադարեցնել գործող Կառավարման խորհրդի գործունեությունը:

3.10. Կազմակերպության Կառավարման խորհրդի գործունեության դադարումից հետո Երևանի քաղաքապետը 7 աշխատանքային օրվա ընթացքում պետք է հայտարարի Կազմակերպության Կառավարման խորհրդի ձևավորման նոր գործընթացի մասին և ընդհանուր առմամբ՝ դադարումից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորի Կազմակերպության Կառավարման նոր խորհուրդ:

Կազմակերպության առաջին Կառավարման խորհուրդը ձևավորվում է 30 աշխատանքային օրվա ընթացքում:

3.11. Կազմակերպության Կառավարման խորհրդի աշխատանքային գործունեությունը կարգավորվում է Կառավարման խորհրդի կողմից սահմանված աշխատակարգով՝ ստորագրված Կառավարման խորհրդի բոլոր անդամների կողմից:

3.12. Կազմակերպության կառավարման խորհրդի գործունեության հիմնական նպատակն է՝ մշակել Կազմակերպության տեսլականն ու զարգացման ծրագիրը, առաջարկություններով հանդես գալ մասնագիտական իր մոտեցումներով:

Կազմակերպության Կառավարման խորհրդի լիազորություններն են.

ա) Կազմակերպության Կառավարման խորհրդի ղեկավարի ընտրությունը,

բ) Կազմակերպության Կառավարման խորհրդի աշխատակարգի հաստատումը,

գ) Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի, ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը,

դ) Կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի ներկայացումը՝ Երևանի քաղաքապետի հաստատմանը,

ե) Կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկությունների ներկայացումը Երևանի քաղաքապետին,
զ) Հիմնադրի կողմից սահմանված կարգով Կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը,
է) սահմանված կարգով Երևանի քաղաքապետին Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
ը) Կազմակերպության տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացումը,
թ) Կազմակերպության տնօրենի հաշվետվությունների քննարկումը և հաստատումը,
ժ) Կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը,
ժա) Օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:
3.13. Կազմակերպության Կառավարման խորհրդին չեն կարող վերապահվել Կազմակերպության Հիմնադրի, Երևանի քաղաքապետի կամ Կազմակերպության տնօրենի լիազորությունները՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
3.14. Կազմակերպության Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ Կազմակերպության Կառավարման խորհրդի նախագահի սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Երևանի քաղաքապետի, Կազմակերպության տնօրենի, Կազմակերպության Կառավարման խորհրդի անդամների ոչ պակաս, քան մեկ երրորդի պահանջով, ինչի դեպքում նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանված ժամկետում և կարգով:
3.15. Կազմակերպության Կառավարման խորհրդի նիստերը իրավազոր են, եթե դրանց մասնակցում է անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երեք քառորդը: Կազմակերպության Կառավարման խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր ձայների մեծամասնությամբ, եթե Կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:
Կազմակերպության Կառավարման խորհրդի բոլոր նիստերը արձանագրվում են:
3.16. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության տնօրենը, ում նշանակում և պաշտոնից ազատում է Երևանի քաղաքապետը:
3.17. Կազմակերպության տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն:
3.18. Կազմակերպության տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը.
ա) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, ում դատվարությունը հանված կամ մարված չէ,
բ) ում ՀՀ օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

գ) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության տնօրեն:

3.19. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
3.20. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ, եթե.
ա) նա չի հանդիսանում ՀՀ քաղաքացի,
բ) նա գրավոր դիմում է այդ մասին,
գ) լրացել է նրա 65 տարին,
դ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի,
ե) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,
զ) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի,
է) նա նշանակվել է ՀՀ օրենքների պահանջների խախտմամբ,
ը) նա իր գործառույթներն իրականացնելիս Կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը,
թ) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
ժ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացած մեղադրական դատավճիռը,
ժա) դատական կարգով Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն,
ժբ) Կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո, հաշվետու ժամանակահատվածում չի վճարել,
ժգ) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

3.21. Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի, Երևանի քաղաքապետի և Կազմակերպության Կառավարման խորհրդի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի, Երևանի քաղաքապետի, Կազմակերպության Կառավարման խորհրդի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
3.22. Կազմակերպության տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Երևանի քաղաքապետը:
Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները Երևանի քաղաքապետի ու Կազմակերպության Կառավարման խորհրդի հետ՝ համաձայն Կազմակերպության սույն կանոնադրության, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ:
Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության տնօրենի հետ՝ աշխատանքային պայմանագրից բացի կնքվում է նաև լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր, որտեղ նշվում են նյութական այն արժեքները, որոնց համար տնօրենը ստանձնում է լիակատար նյութական պատասխանատվություն, ինչպես նաև գործատուի պարտավորությունները՝ վնասների կանխումը ապահովող պայմանների վերաբերյալ:

3.23. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը և/կամ պետությանը պատճառած վնասի համար:
Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարումը հիմք չէ՝ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:
3.24. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու դեպքում Երևանի քաղաքապետը պարտավոր է օրենքով սահմանված կարգով պահանջել՝ լուծել նրա կողմից Կազմակերպությանը կամ համայնքին պատճառած վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու դեպքում Կազմակերպությանը կամ համայնքին պատճառած վնասի համար Երևանի քաղաքապետը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

3.25. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Կազմակերպության Կառավարման խորհրդի և Երևանի քաղաքապետի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.26. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության կամ լիազորությունների դադարեցման դեպքում Երևանի քաղաքապետի որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ՝ Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

3.27. Կազմակերպության տնօրենը.
ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի, Երևանի քաղաքապետի և Կազմակերպության Կառավարման խորհրդի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,
ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
զ) տեղակալների միջև կատարում աշխատանքի բաշխում,
է) Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
ը) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

3.28. Կազմակերպության գործունեության խիստ մասնագիտական՝ գիտական և կազմակերպական հարցերի քննարկման համար և այն արդյունավետ իրականացման նպատակով Կազմակերպության տնօրենը՝ Կազմակերպության տնօրենին կից ստեղծում է Կազմակերպության Գիտական խորհուրդ՝ խորհրդատվական ձայնի իրավունքով:

3.29. Կազմակերպության Գիտական խորհուրդը ձևավորվում է Կազմակերպության տնօրենի նախաձեռնությամբ 30 օրվա ընթացքում՝ ըստ մասնագիտական անհրաժեշտ կարողությունների և անհրաժեշտությունների, որոնց չափորոշիչները հաստատում է Կազմակերպության Կառավարման խորհուրդը:

3.30. Կազմակերպության Գիտական խորհրդի գործունեության ժամկետն է 5 տարին և այն լրանալուն պես՝ Կազմակերպության տնօրենը պարտավորվում է նրա ձևավորմանը՝ համաձայն սույն կանոնադրության 3.29. կետի:

3.31. Կազմակերպության Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են նաև Կազմակերպության տնօրենը, տնօրենի տեղակալը, գիտական քարտուղարը և մասնագիտական ստորաբաժանումների ղեկավարները:

3.32. Կազմակերպության տնօրենը Կազմակերպության Կառավարման խորհրդի կազմին ներկայացնելով հիմնավորումներ՝ կարող է ինքնուրույն դադարեցնել գիտական խորհրդի տվյալ անդամի գործունեությունը և նրան փոխարինել մեկ այլ անդամով:

3.33. Կազմակերպության Գիտական խորհրդի աշխատանքային գործունեությունը և անդամների համապատասխան լիազորությունները կարգավորվում է նույն խորհրդի կողմից սահմանված կանոնակարգով՝ ստորագրված խորհրդի բոլոր անդամների կողմից, որը հաստատում է Կազմակերպության Կառավարման խորհուրդը: »

Սույն փոփոխությունը հանդիսանում է 23.10.2009 թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: